

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԳՐԻԳՈՐ ԹԱԹՈՒԼԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

Հնդվածը ստացվել է՝ 07.03.2021, գրախուսվել է՝ 23.04.2021

ՀՀ-ում 2020 թ.-ին ծավալվող տնտեսական անկումն ունի իր առանձնահատկությունները: Տնտեսական իրավիճակի կտրուկ վատթարացումը հիմնականում պայմանավորված է համավարկով, Արցախյան պատերազմով, աշխատուժի արտահոսքի կարճատևամբ, բնակչության սոցիալական անհանգստությամբ, որը կուտակվել է վերջին տարիներին և խորանում է արդեն նկատված բացասական սոցիալ-տնտեսական հետևանքներով (փոքր և միջին բիզնեսի փակում, աշխատատեղերի կորուստ, վարկային պարտավորությունների սպասարկման դժվարություններ, զանգվածային բժշկական ծառայության խոցելի դիրք): Այդ ամենի մեղմացմանը պետությունը մասնակցում է նվազագույն ծախսերով և ուշացած պատասխանով, ինչը հնարավորություն է տալիս կանխատեսել անկայուն սոցիալ-տնտեսական և նույնիսկ քաղաքական իրավիճակ, որի պատճառով միգրացիոն գործընթացների կառավարման հրատապ հարցերի լուծումը կտեղափոխվի երկրորդ պլան, և ավելի նշանակալից կլինի աշխատանքային միգրանտների մեկնումը հայրենիքից:

Հնդվածի նպատակն է ուսումնասիրել ՀՀ աշխատանքային միգրացիայի խնդիրները և մշակել առաջարկություններ՝ ուղղված աշխատանքային ռեսուրսների միգրացիոն հոսքերի կարգավորման ուղղությամբ:

Ուսումնասիրության նպատակը կոնկրետացված է աշխատանքում լուծված խնդիրներում.

1. Բնութագրել աշխատանքային միգրացիայի էությունը և ընդհանուր օրինաչափությունները,

2. Բացահայտել և վերլուծել աշխատանքային միգրացիայի ներկա միտումները,

3. Իրականացնել աշխատանք արտահանող և ներմուծող երկրների համար աշխատանքային միգրացիայի դրական և բացասական սոցիալ-տնտեսական հետևանքների գնահատում,

4. մշակել ՀՀ համար աշխատանքային միգրացիայի բացասական հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումների շարք:

Հետազոտության ընթացքում որպես **մեթոդներ**՝ կիրառվել է երկրորդային հետազոտությունների սինթեզ վերլուծությունը:

Միջազգային աշխատանքային միգրացիան կարևոր դեր է խաղում աշխարհի առանձին երկրների և տարածաշրջանների ժողովրդագրական զարգացման գործում: Արտագաղթի զգալի հոսքերը նպաստեցին տեղահանության գործընթացին, իբրև հետևանք ունենալով հյուրընկալ երկրներում բնակչության թվի աճի և դրան զուգահեռ էական ազդեցություն տարիքի և սեռի կառուցվածքի,

տարածաշրջանային անհամապատասխանությունների մակարդակի և պետության հասարակական կյանքի շատ այլ կարևոր ասպեկտների վրա:

Միջազգային աշխատանքային միգրացիան բնակչության տարածքային շարժունակության բոլոր տեսակների ընդհանրությունն է, որը կապված է այլ երկրի աշխատանքային գործունեության հետ¹:

Աշխատանքային միգրանտները կարևոր դեր են խաղում աշխատաշուկաների համար աշխատուժ ապահովելու, աշխատուժի պակասը լրացնելու և սոցիալական պաշտպանության ապահովման գործընթացում:

Աշխատուժի միգրացիան ունի բազմաթիվ պատճառներ.

- տնտեսական հարթության տեսանկյունից՝ բարձր մակարդակի աշխատավարձերը և առկա աշխատատեղերը, տարածաշրջանում արտադրության շարժի կտրուկ փոփոխությունները,
- հակամարտությունները, աղքատությունը,
- ցանկալի աշխատանքի հնարավորությունը,
- կյանքի որակը, կենսապայմանները բարելավելու անհրաժեշտությունը և հնարավորությունը,
- առողջական ու ոչ բարենպաստ կլիմայական պայմանները.
- ընտանեկան և ամուսնական պայմանները,
- կյանքի ձևը, որոշակի մշակույթն ու գիտելիքները թարմացնելու անհրաժեշտությունը,
- աշխատանքային բախումները,
- սոցիալական ենթակառուցվածքների թերզարգացվածությունը,
- պատահական հանգամանքները և այլն:

Արդյունավետ կարգավորվող աշխատանքային միգրացիան օգտակար է աշխատուժ և՛ ընդունող, և՛ ուղարկող երկրներին: Աշխատանքային ռեսուրսներ արտահանող երկրների դրական հետևանքներն են երկրի կայուն զարգացման նպաստումը, աշխատուժի առաջարկի ու պահանջարկի հավասարակշռումը, գործազրկության նվազեցումը, տրանսֆերտների ստացումը, միգրանտների վերադարձը հարստացված գիտելիքներով և փորձով, աշխատանքի արտադրողականության ավելացումը, անձնական զարգացումը՝ կրթության և առողջապահական համակարգերի ծախսերը հոգալով, մանկական մահացության նվազեցումը, աշխատուժի ավելացմանը հակվածությունը՝ դրանով իսկ նպաստելով ընդհանուր ՀՆԱ-ի աճին, մեկ շնչի հաշվով եկամուտների ավելացումը, նորարարություն գործընթացի խթանումը, համայնքներին ինչպես մշակութային, այնպես էլ սոցիալական նվաճումներով հարստացումը, ներքին շուկայի պահանջարկի խթանումը:

Աշխատանքային ռեսուրսներ արտահանող երկրների թերություններից են աշխատանքի ընթացքում ավելի շատ հարկերի վճարումը, աշխատունակ տարիքի բնակչության կորուստը, «ուղեղների արտահոսքը», աշխատանքային ար-

¹ Биссон Л. Сотрудничество России и ЕС в сфере миграции, Мировая экономика и международные отношения, 2014, №4, с. 72-81.

տագաղթողների ընդհանուր կրթական և մասնագիտական ուսուցման վրա կատարված պետության ներդրումների վերադարձի չստացումը, ընտանեկան հարաբերությունների վատթարացումը, ծախսատարությունը հատկապես ցածր հմուտ աշխատանքային միգրանտ աշխատողների համար (փաստաթղթերի արժեքը, տրանսպորտային ծախսեր, մնալու հետ կապված ծախսերը, հայրենադարձության և վերաինտեգրման ծախսեր), աշխատանքում հիմնարար սկզբունքներին և իրավունքներին չհամապատասխանելը՝ աշխատանքի խտրականությունը, աշխատավարձային տարբերությունը, աշխատանքի վատ պայմանները, մասնագիտական որակավորումների և հմտությունների անհամապատասխանությունը՝ հատկապես ցածր որակավորում և կիսահմուտ աշխատանքային միգրանտ աշխատողների որակավորման ճանաչման գործընթացների հաճախ անհամապատասխանությունը, սոցիալական պաշտպանության բացակայությունը:

Երկրները, որոնք ընդունում են աշխատանքային ռեսուրսները, նույնպես ունեն են որոշակի դրական և բացասական կողմեր: Դրական կողմերից են Էական խնայողությունների ձևավորումը հմուտ աշխատուժի վերապատրաստման վրա, արտադրանքի մրցունակության բարձրացումը՝ օտարերկրյա աշխատուժի ավելի ցածր աշխատուժի պատճառով, առաջին հերթին օտարերկրյա աշխատողների աշխատանք կորցնելը, եթե ձեռնարկության տնտեսական վիճակը վատթարանում է, կենսաթոշակների և այլ սոցիալական նպաստների վրա տնտեսումները: Թերությունները կարելի է համարել գործազրկությունն աճը, սոցիալական լարվածությունը, որն արտահայտվում է ներգաղթյալների նկատմամբ խտրականությամբ, իրավիճակի սրումը տեղական աշխատաշուկայում, աշխատուժի գնի անկումը, երբ աշխատաշուկայում առաջարկը բարձրանում է, ապօրինի ներգաղթով պայմանավորված բացասական հետևանքները: Հետևաբար, շատ երկրներ օգտագործում են աշխատանքային միգրացիան կարգավորելու տարբեր մեթոդներ՝ օտարերկրացիների հոսքը սահմանափակելու համար, մշակում են միգրացիոն քաղաքականություն՝ երկրում միգրանտների կազմը, ինչպես նաև երկրում նրանց բնակության բնույթը և զբաղվածության ոլորտը վերահսկելու, սեփական երկրի բնակչության և տնտեսական շահերը, ի վերջո պետության անվտանգությունը պաշտպանելու համար:

ՀՀ աշխատանքային միգրացիոն հիմնախնդիրները համակարգված ուսումնասիրելու նպատակով վերլուծվել է մի շարք ցուցանիշների դինամիկան: 2017-2019 թթ.-ին տեղի է ունեցել ուղևորահոսքերի (ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնողների) աճի միտում, որին նպաստել է ինչպես ՀՀ քաղաքացիների շարժունակության ավելացումը, այնպես էլ օտարերկրացիների ուղևորահոսքերի թվի աճը: ՀՀ քաղաքացիների մասնաբաժինը ուղևորահոսքերի ընդհանուր թվաքանակում ուսումնասիրվող ժամանակաշրջանի սկզբի երկու տարում կազմել է 57.0%, իսկ 2019թ.-ին նվազել է կազմելով 55%¹:

¹ Հաշվարկների հիմքը հանդիսացել է Հայաստանի ժողովրդագրական ժողովածու – 2020:

ՀՀ քաղաքացիների ելքերի աճը 2018-ին նախորդ տարվա համեմատ կազմել է 9,2%, որի միտումը շարունակել է նաև 2019թ.-ին՝ կազմելով 15,1%: Օտարերկրյա քաղաքացիների ելքերի աճը 2018-ին նախորդ տարվա համեմատ աճել է 8,8%-ով, իսկ 2019թ.-ին 2018թ.-ի համեմատ կազմել է 20%: Սահմանային գրանցումների առումով ելքերի էական աճ տեղի է ունեցել օտարերկրյա քաղաքացիների մասով: ՀՀ քաղաքացիների մուտքերի աճը 2018-2019թթ.-ին գրեթե մնացել է անփոփոխ կազմել է 11,3% և 11,4%, իսկ օտարերկրյա քաղաքացիների մուտքերի աճը 2018-ին նախորդ տարվա համեմատ աճել է 9,4%-ով, իսկ 2019թ.-ին 2018թ.-ի համեմատ կազմել է 19,6%: Սահմանային գրանցումների տեսանկյունից մուտքերի մասով էական աճը տեղի է ունեցել օտարերկրյա քաղաքացիների հաշվին¹:

Միգրացիոն հոսքերի դինամիկան ուսումնասիրելու նպատակով կազմվել է աղյուսակ 1:

Աղյուսակ 1

Միգրացիոն հոսքերի դինամիկան 2015-2019թթ.²

	<i>2015թ.</i>	<i>2016թ.</i>	<i>2017թ.</i>	<i>2018թ.</i>	<i>2019թ.</i>
Բմիգրացիայի դեպքերի տարեկան թիվը	10 600	8 200	9 200	10 100	12 100
Բմիգրացիայի տարեկան աճը, %	-	77	112	110	120
Էմիգրացիայի դեպքերի տարեկան թիվը	36 500	33 000	33 200	28 386	27 500
Էմիգրացիայի տարեկան աճը, %	-	90.5	100.6	85.5	97
Միգրացիայի մնացորդ	-25 900	-24 800	-24 000	-18 286	-15 400

2017-2019թթ ունեցել ենք իմիգրացիայի դեպքերի թվի աճ: Հատկապես էական աճ ունեցել ենք 2019թ.-ին՝ 20%: Էմիգրացիայի դեպքերի տարեկան թիվը 2015-2019թթ.-ին ունեցել ենք նվազման միտում՝ 36500-ից 27500, էական նվազման աճի տեմպ ունեցել ենք 2018թ.-ին: 2015-2019թթ.-ին իմիգրացիայի դեպքերի տարեկան միջին թիվը կազմել է 10040, իսկ Էմիգրացիայինը՝ 31717, այսինքն՝ Էմիգրացիայի դեպքերի թիվը մոտ 3 անգամ գերազանցել է իմիգրացիայինը: Որքան բարձր է միջին աշխատավարձը, այնքան բարձր է միգրացիայի մնացորդի ցուցանիշը (այն ժամանակ ժամանողների թիվը գերազանցում է մեկնողների թվին) և, համապատասխանաբար, երկիրն ավելի գրավիչ է միգրանտների համար³:

Հայաստանի Էմիգրացիոն հոսքերից ամենամեծը դեպի Ռուսաստան հոսքն է՝ ավելի քան 90%⁴: Ռուսաստանը գրավիչ է հատկապես սեզոնային աշխատան-

¹ Հաշվարկների հիմքը հանդիսացել է Հայաստանի ժողովրդագրական ժողովածու - 2020
² Աղյուսակը կազմվել է Հայաստանի ժողովրդագրական ժողովածու - 2020-ում ներկայացված տվյալների հիման վրա
³ Sedlov A. 2019. The Imperatives of Labor Immigration to Russia, Sociological Research, 58:1-2, 20-39, DOI: 10.1080/10610154.2019.1688995, p. 7.
⁴ IOM 2014 Report on Household Survey on Migration in Armenia, Yerevan, p.69, Minasyan, Anna, Alina Poghosyan, Lilit Gevorgyan & Haykanush Chobanyan 2008. Return Migration to Armenia in

քային միգրանտների համար:

Ուսումնասիրության համաձայն Հայաստանի տնային տնտեսությունների 36%-ը ներգրավված է միգրացիոն գործընթացներում¹: Միգրացիոն հոսքերի տեսակներից են աշխատանքային միգրացիան, մշտական միգրացիան և այլ նպատակներով միգրացիա (ուսանողական, բժշկական և այլն)

Ընդհանուր առմամբ աշխատանքային միգրացիան կազմում է ընդհանուր միգրացիոն ելքային հոսքերի ավելի քան 85%-ը²:

Միգրանտների մոտ 30 տոկոսը «շատ վատ» վիճակում գտնվող տնային տնտեսություններից է, 33 տոկոսը՝ «վատ» վիճակում և 35 տոկոսը՝ «միջին» վիճակում գտնվող տնային տնտեսություններից: Աշխատուժի միգրացիային աղքատ տնային տնտեսությունների նման համեմատաբար բարձր մասնակցությունը հավանաբար կարելի է վերագրել մեկնման երկրներում, հատկապես՝ Ռուսաստանում, հայկական սփյուռքի ցանցերի առկայությանը, որոնք իջեցնում են արտագաղթի ծախսերը: Ցածր որակավորմամբ միգրանտների մեծ մասի աշխատանքը շինարարության ոլորտում է, որոնց բաժին է ընկնում վերադարձած բնակչության գրեթե 70 տոկոսը, վաստակը՝ ամսական 500 դոլար: Համալսարանական կամ ավելի բարձր կրթությամբ միգրանտները հիմնականում աշխատել են մեկնման երկրների առողջապահության կամ կրթության ոլորտներում³:

Աշխատող միգրանտներն իրապես ավելի շատ են վաստակում նշված ավելի բարձր եկամտով ուղղություններում, քան իրենց գործընկերները հայրենիքում: Նրանց ամսական միջին աշխատավարձը կազմել է 500 դոլար՝ Հայաստանում աշխատող մարդկանց վաստակած 250 դոլարից պակաս գումարի համեմատ⁴: Թվերը խոսում են այն մասին, որ վերադարձից հետո աշխատանքային միգրանտների ֆինանսական վիճակի բարելավումը էական չի կարող լինել, որն էլ կհանգեցնի կրկին արտագաղթին:

Ուսումնասիրելով 2017-2019թթ.-ին գործազրկության մակարդակի դինամիկան կարող ենք փաստել, որ այն սկզբում աճել է՝ 17,8%-ից հասնելով 19%, ապա նվազել է կազմելով 18,3%: Աճը հիմնականում պայմանավորված էր աշխատաշուկայի վրա ՌԴ կոշտ միգրացիոն քաղաքականության ձևավորմամբ, տնտեսական վիճակի անբարենպաստ փոփոխությամբ, իմիգրացիայի դեպքերի տա-

2002-2008: A study. Yerevan: Asoghik., p.12. Dulgaryan, Anush, George Welton, Aaron Erlich & Andrew Golda 2008. Labor migration in Armenian Communities: a Community Survery. Yerevan: Eurasia Partnership Foundation & Caucasus Research Resource Centers, p. 23.

¹ Hakobyan I. Remittances of Migrants; The Role of the Diaspora in Human Development in: National Human Development Report, Armenia. Yerevan: UNDP. 2009. pp. 103-128, p 110

² IOM 2011 Assessment Labour Market Potential in Armenia, Yerevan, p. 14, Minasyan A, Poghosyan A, Gevorgyan L., Chobanyan H. 2008. Return Migration to Armenia in 2002-2008: A study. Yerevan: Asoghik., p.9

³ <https://documents1.worldbank.org/curated/en/402321574328607652/pdf/Armenia-Better-Understanding-International-Labor-Mobility.pdf>

⁴ <https://documents1.worldbank.org/curated/en/402321574328607652/pdf/Armenia-Better-Understanding-International-Labor-Mobility.pdf>

րեկան աճով, ինչպես նաև էմիգրացիայի դեպքերի նվազմամբ:

ՀՀ ժողովրդագրական իրավիճակի վատթարացման պայմաններում, մասնավորապես մշտական բնակչության, աշխատանքային տարիքի թվի, ծնելիության, բնակչության բնական հավելաճի նվազմամբ (բացառությամբ 2018թ.-ին), ինչպես նաև պայմանավորված ծերացման ցուցանիշի ավելացման հետ 2016-2019 թթ.-ին պահպանվել է միգրացիայի բացասական սալդոն, ունենալով նվազման միտում: Էական նվազում արձանագրվել է 2018թ.-ին կազմելով 5714 դեպք: 2017-2019թթ.-ին միգրացիայի բացասական սալդոյի և բնակչության բնական հավելաճը հարաբերակցությունն ունեցել է նվազման միտում՝ 2.2, 1.6 և 1.5: Էական նվազում ապահովվող է 2018թ.-ին¹:

Հայաստանի Հանրապետությունից մեկնած և 2019թ. դրությամբ դեռևս չվերադարձած տնային տնտեսության անդամների՝ տեղաշարժերի 69.6%-ը եղել է միջպետական, որի գերակշիռ մեծամասնության՝ 90% տեղաշարժերն իրականացվել են Ռուսաստանի Դաշնության հետ: 2014-2019թթ. ընթացքում մեկնած և 2019թ. դրությամբ վերադարձած տնային տնտեսության անդամների 80.2%-ը եղել է միջպետական, որի գերակշիռ մեծամասնության՝ 87.8%-ի տեղաշարժերն իրականացվել են Ռուսաստանի Դաշնության հետ²: Հասունացած երիտասարդներն ավելի ու ավելի հաճախ շարժում են ավագ սերնդի կողմից ծեծված միգրացիոն ուղիով: Հարկ է նշել, որ եվրոպական երկրների մեծ մասը ակտիվորեն աջակցում է նման «ուղեղների արտահոսքին» և խթանում բարձր աշխատավարձերի գործընթացը և ներգաղթյալների գիտական ներուժի կիրառումը: Համաձայն վիճակագրության մեկնած և 2019թ. դրությամբ չվերադարձած տնային տնտեսության անդամների բաշխումը ունեցել է հետևյալ պատկերը՝ ըստ բացակայության տևողության մինչև երեք ամսի 30%, 3-12 ամիս 48%, 12 ամսից ավելի՝ 22%: Հիմնական մեկնողները բացակայում են 3-12 ամսով, որը կազմում է աշխատանքի և բնակության նպատակով մեկնողները կեսից ավելին են: Չվերադարձածները մեր ազգային մարդկային կապիտալն է, որը սպառնալիք է ՀՀ տնտեսության ապագայի համար:

Կարճաժամկետ միգրացիան, հավանաբար, բերում է ավելի բարձր եկամուտների, բայց բացառում է հմտությունների և մարդկային կապիտալի մշտական կորուստ, ինչը հաճախ դիտվում է որպես սպառնալիք³: Կարճաժամկետ միգրանտների մեծ մասը արական սեռի անհատներ են⁴:

Հայաստանում աշխատանքային միգրացիան ունի սեզոնային բնույթ, և

¹ Հաշվարկների հիմքը հանդիսացել է Հայաստանի վիճակագրական տարեգիրք -2020-ի և աղյուսակ 1-ի տվյալները:

² Հայաստանի ժողովրդագրական ժողովածու - 2020, էջ 123:

³ Bellak C., Leibrecht M., Liebensteiner M.(2014) Shortterm Labour Migration from the Republic of Armenia to the Russian Federation, The Journal of Development Studies, 50:3, 349-367, DOI: [10.1080/00220388.2013.858125](https://doi.org/10.1080/00220388.2013.858125)

⁴ Denisenko M., Chernina E. 2017. The Migration of Labor and Migrant Incomes in Russia, Problems of Economic Transition, 59:11-12, 886-908, DOI: [10.1080/10611991.2017.1431482](https://doi.org/10.1080/10611991.2017.1431482)

միգրանտները Ռուսաստանում փաստացի անց են կացնում մոտ 8 ամիս¹: Ժամանակավոր աշխատանքային միգրանտների մեծ մասը ցածր որակավորում ունի. ներկայիս և վերադարձած միգրանտների 60 տոկոսը միջնակարգ կամ ցածր կրթություն ունի և մեկնում է Ռուսաստան (92 տոկոս), ուր հայկական սփյուռքի մեծ ցանցեր կան²:

Հայաստանից Ռուսաստան կարճաժամկետ միգրացիան տեղի է ունենում ինտիմությունալ պայմաններում, ինչը մեծ հաշվով նպաստում է կարճաժամկետ աշխատանքային միգրացիային³:

2017-2019 հաշվառված իմիգրանտների թիվը ունեցել է աճի միտում՝ 9384-ից հասնելով 101783⁴: Հաշվառված իմիգրանտների ըստ քաղաքացիության երկրների հիմնականը ՀՀ քաղաքացիներն են: Հարկ է նշել, որ օտարերկրյա ժամանող քաղաքացիներից (առանց Արցախի Հանրապետության), մեծամասնությունը եկել է Վրաստանից, Իրանից, ՌԴ-ից, Սիրիայի Արաբական Հանրապետությունից:

2017-2019թթ հաշվառված միգրանտների սեռային կազմը ուսումնասիրելիս պարզվում է, որ կանայք գերազանցել են տղամարդկանց, սակայն ունեցել է նվազման միտում՝ է 404, 369 և 175: Տարիքային կազմը վերլուծելիս, 2017-2019թթ հաշվառված միգրանտներում հիմնականը կազմել են 0-4 տարեկանները 28-23 %, նվազման միտում ունենալով, և 15-19 տարեկանները՝ 11%-ից նվազելով 8%: 2017-2019թթ հաշվառված միգրանտների աշխատունակ տարիքի բնակչությունը ունեցել է աճի միտում 4989-ից հասել է 6020-ի, իսկ դրանց տեսակարար կշիռը հաշվառված միգրանտներում կազմել է 53-54% աճի միտումը պահելով⁵:

Կացության կարգավիճակ ստացած օտարերկրյա քաղաքացիների թիվը 2019թ.-ին կազմել է 7873, ընդ որում գերակշիռ մասը կազմել են Հնդկաստանի, Իրանի և ՌԴ քաղաքացիները: Դրանցից 5262 ստացել է ժամանակավոր կացության կարգավիճակ: 4013-ի տարիքային խումբը եղել է 15-29, 3072-ինը՝ 30-64: Ժամանակավոր կացության կարգավիճակ հիմնականում տրվել է Հնդկաստանի և Իրանի քաղաքացիների համար, իսկ ՌԴ քաղաքացիներին՝ մշտական⁶:

ՀՀ-ում ապաստան հայցած քաղաքացիների թիվը 2018 կազմել է 248, որոնց հիմնական մասը աշխատունակ տարիքի տղամարդիկ են: Դրա գերակշիռ մասը՝ 43% կազմել են Իրանի քաղաքացիները, Սիրիայինը՝ 15% Կուբայինը՝ 13%

¹ Minasyan A, Poghosyan A, Hakobyan T. , Hanchilova B. 2008. Labor Migration from Armenia in 2005-2007: A survey. Yerevan: Asoghik, p.28.

² <https://documents1.worldbank.org/curated/en/402321574328607652/pdf/Armenia-Better-Understanding-International-Labor-Mobility.pdf>

³ Bellak C., Leibrecht M., Liebensteiner M.(2014) Shortterm Labour Migration from the Republic of Armenia to the Russian Federation, The Journal of Development Studies, 50:3, 349-367, DOI: [10.1080/00220388.2013.858125](https://doi.org/10.1080/00220388.2013.858125)

⁴ Հաշվարկների հիմքը հանդիսացել է Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի տվյալները – 2020:

⁵ Հաշվարկների հիմքը հանդիսացել է Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի տվյալները – 2020:

⁶ Հաշվարկների հիմքը հանդիսացել է Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի տվյալները – 2020:

և Իրաքինը՝ 8%:

2018 թ չՀ-ում փախստական կարգավիճակ տրվել է 116 քաղաքացու, որոնց հիմնական մասը աշխատունակ տարիքի են: Գերակշիռ մասը կազմել են Իրանի քաղաքացիները 39%, Սիրիայինը՝ 27% և Իրաքինը՝ 15%: Այս համատեքստում անհրաժեշտ է ուշադրության սևեռել Աֆղանստանի և Թուրքիայի չորսական փախստականներին: Հաշվի առնելով ՀՀ անվտանգության խնդիրը պետական մարմինները կացության կարգավիճակ տրամադրող օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ պետք է լինեն հետևողական:

Միգրանտների եկամուտները, և նրանց կողմից արտերկրից ուղարկված դրամական փոխանցումները կարևոր դեր ունեն ՀՀ տնտեսական զարգացման վրա: Համաձայն վճարային հաշվեկշռի 2016-2019թթ Հայաստանի Հանրապետություն անձնական դրամական փոխանցումները 2017թ.-ին աճել է, 2018-ին գրանցվել է անկում, իսկ 2019թ.-ին դարձյալ աճել է կազմելով \$1489,5 մլն, որը 2017թ.-ի համեմատ պակաս է եղել \$4,7 մլն, նվազումը հարաբերական մեծությամբ կազմել է 3,1%¹: Միգրանտներ ունեցող տնային տնտեսությունների եկամտի գրեթե 35 %-ը բաժին է ընկնում դրամական փոխանցումներին²:

Հարկ է նշել, որ ՀՆԱ-ում դրամական փոխանցումների տեսակարար կշիռը 2019 թ.-ին կազմել է 10,8%: 2017-2019 թթ.-ին այդ հարաբերակցությունն ունեցել է նվազման միտում³:

Անձնական տրանսֆերտների դեպքում միտումը նույն է եղել ինչ անձնական դրամական փոխանցումներինը, սակայն 2017թ.-ի համամատ 2019թ.-ին ավելացել է \$2 մլն-ով կազմելով \$682 մլն, հարաբերական մեծությամբ աճը կազմել է 2,9%: 2016-2019թթ.-ին աշխատանքային պայմանագրով այլ երկրում աշխատող ՀՀ ռեզիդենտի կողմից կատարված անձնական դրամական փոխանցումները բացառությամբ 2018թ.-ին ունեցել է աճի մտում, բայց 2019թ.-ի դրամական փոխանցումները կազմել են \$643մլն, որը \$9,5 մլն-ով ավելի քիչ են 2017թ.-ի համեմատ: Այդ նվազումը հարաբերական մեծությամբ կազմել է 1,4%: Սեզոնային աշխատողները հիմնականում մեկնում են ՌԴ, որոնց թվի կրճատումը 2017թ.-ին համեմատ որոշակիորեն պայմանավորված է եղել ռուբլու՝ դոլարի նկատմամբ արժեզրկմամբ⁴:

2016-2019 թթ.-ին մեկ շնչի հաշվով դրամական փոխանցումներն ունեցել է նվազման միտում, բացառությամբ 2019թ.-ին: Այդ ցուցանիշը 2016 թ.-ին կազմել է \$579, դրսևորելով նվազման միտում մինչև 2018թ.-ը կազմելով \$489, իսկ 2019թ.-ին այն դարձել է \$502⁵:

¹ Հաշվարկները կատարվել են ԿԲ տվյալների հիման վրա:

² <https://documents1.worldbank.org/curated/en/402321574328607652/pdf/Armenia-Better-Understanding-International-Labor-Mobility.pdf>

³ Հաշվարկները կատարվել են ԿԲ տվյալների և վիճակագրական տարեգրքերի ցուցանիշների հիման վրա:

⁴ Հաշվարկները կատարվել են ԿԲ տվյալների հիման վրա:

⁵ Հաշվարկները կատարվել են ԿԲ տվյալների և վիճակագրական տարեգրքերի ցուցանիշների հիման վրա:

Դրամական փոխանցումների վերլուծությանը զուգահեռ անհրաժեշտ է ուսումնասիրել աղքատության մակարդակի, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի անվանական արժեքի, մեկ շնչի հաշվով ամսական դրամական եկամուտների և դրա կառուցվածքի դինամիկան: 2016-2019թթ.-ին աղքատության մակարդակը հաջորդաբար կազմել է 29.4%, 25,7%, 23,8% 26,4%, իսկ ծայրահեղ 1.8%, 1,4%, 1,0% և 1,4%¹:

2016-2019թթ Հայաստանի Հայաստանում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի անվանական արժեքն ունեցել է աճի միտում՝ \$3524 դարձել \$4616, աճի տեմպը կազմել է 8,4-9,9%²: Տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով ամսական դրամական եկամուտները հաջորդաբար՝ 58 474 դրամ, 61 047 դրամ, 61 076 դրամ, որից աշխատանքային եկամուտները՝ 37 773 դրամ, 39 165 դրամ, 37 733 դրամ, վերջիններիս տեսակարար կշիռը կազմել է 64.6%, 64.1% և 61.8%³:

Տնտեսության զարգացման գործում կարևոր դեր ունեն աշխատանքային ռեսուրսները: 2017թ.-ին ունեցել ենք աշխատանքային ռեսուրսների աճ, այնուհետև նվազել, ապա աճել պահպանելով 2017թ.-ի մակարդակը:

Ձաղվածության ակտիվ քաղաքականությունն ինքնին արդյունավետորեն խթանում է աշխատուժի առաջարկի աճը: Կարճ ժամանակահատվածում այն կհանգեցնի աշխատատեղերի փոխարինմանը ցածր արտադրողականությամբ և ցածր աշխատավարձով: Միջնաժամկետ հեռանկարում, աշխատուժի մատակարարումը պետք է ուղեկցվի կառավարության կողմից իրականացվող «ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության» հետ⁴:

Աշխատունակ տարիքը 2017-2018 թթ.-ին աճել է, իսկ 2019 թթ.-ին նվազել է 17000-ով: Տարիքային կազմի փոփոխության առումով աշխատունակ ավագ տարիք աճը եղել է ամենաբարձրը, այն 2016-2019թթ.-ին ունեցել է աճի միտում, իսկ երիտասարդներինը 2017 թ.-ին ունեցել է նվազման միտում, սակայն 2018թ.-ին նախորդ տարվա համեմատ զգալի աճել է 10.4%, որին նորից հաջորդել է նվազումը, արդյունքում երիտասարդների քանակը ավելի փոքր է եղել քան 2016թ.-ինը: Աշխատունակ տարիքի կառուցվածքային վերլուծության արդյունքը ցույց է տալիս, որը երիտասարդների տեսակարար կշիռն ունեցել է նվազման, իսկ ավագ տարիքինը աճի միտում, որն իր բացասական ազդեցություն է ունենում ժողովրդագրական իրավիճակի վրա⁵:

Տարիներ շարունակ ՀՀ-ում առկա է եղել «Ուղեղների արտահոսքը», որը ժամանակակից աշխատանքային միգրացիայի հիմնական տարբերակիչ հատ-

¹ Հաշվարկների համար հիմք է հանդիսացել Հայաստանի վիճակագրական տարեգրքերը 2017-2020:

² Հաշվարկների հիմքը հանդիսացել է Հայաստանի վիճակագրական տարեգիրքի տվյալները -2020:

³ Հայաստանի ժողովրդագրական ժողովածու – 2020:

⁴ Макарян А.Р., Роль новой модели политикизанятости в снижении уровня безработицы в Республике Армения, Региональные проблемы преобразования экономики, РАН, Дагестанский научный центр Институт социально-экономических исследований, № 4 (42), 2014 с. 148-153.

⁵ Հաշվարկները հիմնված են «Աշխատանքի շուկայի Հայաստանի Հանրապետությունում 2016-2019թթ.» ցուցանիշների վրա:

կություններն են:

ՀՀ կառավարությունը խնդիր է դրել, երկրի բնակչությունը հասցնի 5 մլն-ի, սակայն այս ուղղությամբ.

- Բացակայում են մասնագիտական որակավորումներով, կրթական, տնտեսական, ժողովրդագրական, սոցիալ-մշակութային և այլ բնութագրերով միգրանտների ներգրավման երկրում պահանջարկ ունեցող ծրագրերը, որոնք թույլ կտան միգրանտներին ինտեգրելու հասարակությանը:
- Դեռևս քաղաքացիները բաշվում են խոչընդոտների ժամանակավոր կացության թույլտվության, քաղաքացիություն ստանալու գործընթացում:
- Բացակայում է ՀՀ կրթական համակարգի միգրացիոն ներուժի արդյունավետ օգտագործումը:

Հաշվի առնելով ցածր որակավորումը ունեցող աշխատողների տեսակարար կշիռը անհրաժեշտ է կարևորել աշխատաշուկայի ազգային ինստիտուտների դերը, սոցիալական երկխոսությունը միգրանտ աշխատողներին չարաշահումից և անարդար վերաբերմունքից պաշտպանելու գործում, միաժամանակ պաշտպանելով տեղական աշխատողներին:

Եզրակացություններ և առաջարկություններ

Առաջիկա տարիներին եթե տեղական գործատուները չապահովեն ռուսականին եվրոպականին, ամերիկյանին և չինականին մոտ աշխատավարձեր՝ աշխատուժի միաժամանակյա աճով, և պետությունը չբարձրացնի մատուցվող ծառայությունների որակը, ապա աշխատանքային միգրանտների թիվը կշարունակի անվերահսկելի աճել, դա կրերի ապագայում Հայաստանի Հանրապետության տնտեսության աճի սահմանափակող գործոնի:

Անհրաժեշտ է հստակեցնել մեր հնարավորություններն և գործողությունները, որոնք թույլ կտան բարձրանալ աշխատանքի բաշխման համաշխարհային համակարգում, ձևավորելով տնտեսական աճի նոր երկար ալիք:

Բնակչության միջպետական արտահոսքը կանխելու համար անհրաժեշտ է օգտագործել տնտեսական լծակներ և դիֆերենցվեն տարբեր կատեգորիաների աշխատողների համար: Օրինակ, որպեսզի գյուղական բնակչության զգալի մասը իրենց աշխատուժը կիրառեն վարելահողերի վրա, հաշվի առնելով մեր երկրի չմշակված հողերի զգալի բաժինը, անհրաժեշտ է միջոցներ գտնել գյուղի սոցիալական զարգացման և գյուղական արտադրության համար: Գիտնականների արտագաղթը կանխելու համար անհրաժեշտ է գիտության համար բավարար ֆինանսավորում, ներառյալ աշխատավարձերի բարձրացում:

Ներկայումս ՀՀ գրանցված են զգալի թափուր աշխատատեղեր, հաճախ առաջարկելով նվազագույն աշխատավարձով: Ինչպես ցույց է տալիս այլ երկրների փորձը, բարձր աշխատավարձի միջոցով պետությունը կկարողանա օպտիմալացնել միգրացիոն գործընթացները և ստեղծել կայուն տնտեսական զարգացման նախադրյալներ:

ՀՀ միջնաժամկետ հեռանկարում (3-4 տարի) կարելի է ակնկալել հետևյալ սցենարները, որոնք ուղղակիորեն կախված են կարճաժամկետ կտրվածքով

կառավարության կողմից ձեռնարկված սոցիալ-տնտեսական միջոցառումներից.

1. Լավատեսական սցենար: Սահմանափակիչ միջոցառումների ավարտից հետո ՀՀ կառավարությունը ակտիվորեն կաջակցի գնողունակության պահանջարկին՝ տնտեսությունն փող ներարկելով կօզնի դուրս գալու «դանդաղեցման» իրավիճակից՝ հատուկ ուշադրություն դարձնելով փոքր և միջին բիզնեսին:

2. Հոռետեսական սցենար: ՀՀ տնտեսությունը դանդաղ վերականգնվում է, արդյունավետ պահանջարկը ցածր մակարդակի վրա է, իրական գործազրկության մակարդակն աճում է: «Ուղեղների արտահոսքը» և արտագաղթը ՀՀ-ից կշարունակվեն հիմնականում երիտասարդների հաշվին:

Նշված սցենարներից յուրաքանչյուրի իրականացումը ուղղակիորեն կախված է երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակից և քաղաքական զարգացման կայունությունից: Առայժմ ամենահավանականը երկրորդ սցենարի իրականացումն է:

Մեր երկրում որակյալ աշխատուժի պակասը շուտով կդառնա ակնհայտ, վերածվելով տնտեսական զարգացման իրական արգելակի և կսկսի գործել դրսից բարձր որակավորում ունեցող կադրեր ներգրավելու մեխանիզմը:

- Աշխատանքային խնդիրների հետ կապված միգրացիաներից խուսափելու համար հայ գործատուները պետք է նվազեցնեն թեկնածուների նկատմամբ պահանջները, կատարեն անձնակազմի իրավասու ընտրություն և հավաքագրում, ինչպես նաև չվախենան ներդրումներ կատարել նրանց ուսման առաջընթացի համար, քանի որ որքան լավ կրթություն ստանա, գործատուն ավելի ուշ կստանա ավելի փորձառու մասնագետ
- Պետությունը պետք է աջակցի փոքր բիզնեսի զարգացմանը, երիտասարդներին հնարավորություն ընձեռի զարգացնել իրենց կարողությունները և հիմնել իրենց սեփական բիզնեսը: Միաժամանակ պետք է պաշտպանի փոքր բիզնեսը այն ընկերություններից, որոնք երկար ժամանակ շուկայում են և ունակ են ոչնչացնել մեկնարկային բիզնեսը զարգացման շատ վաղ փուլում:
- ՀՀ աշխատանքի շուկայում լարված իրավիճակ մեղմելու նպատակով անհրաժեշտ են հակաճգնաժամային միջոցառումներ. ա) խրախուսել լրացուցիչ աշխատեղերի ստեղծումը, ինչպես նաև պահպանել և աջակցել տնտեսապես կենսունակ աշխատատեղերը, զարգացնել ժամանակավոր զբաղվածությունը, բ) նպաստել աշխատունակ տարիքի բնակչության միգրացիային՝ երկրից դուրս աշխատելու համար՝ աշխատանքային միգրանտների պաշտպանության և աշխատանքային միգրացիայի ծախսերի նվազեցման հաշվին, գ) նպաստել շարունակական կրթության համակարգի կազմակերպմանը, որը կարող է ընդգրկել աշխատանք փնտրողների մի մասը, դ) ընդլայնել երկարաժամկետ վերաֆինանսավորման մասշտաբը:

Խնդիր դնելով հայ ներգաղթյալների ներգրավումը աշխատուժի համալրման և նորարարական ներուժ զարգացնելու համար, անհրաժեշտ է.

- 1) պայմաններ ստեղծել միգրանտների հարմարվելու, ինտեգրման, իրավունքների և ազատությունների, սոցիալական պաշտպանվածության ապահովման համար,

- 2) հեշտացնել մշտապես բնակվելու կարգավիճակ ստանալու կարգը, մատչելի դարձնել բնակարանային խնդիրը,
- 3) ընդունել հարմարվողականության և ինտեգրման պետական ծրագրեր և ներգրավել բոլոր շահագրգիռ կողմերին այդպիսի ծրագրերի կազմակերպմանը լրատվամիջոցների ներուժն ամբողջությամբ օգտագործելու համար,

ՀՀ համար երիտասարդների արտագաղթը աղետ է, ինչը հանգեցնում է նաև մնացածների դեգրադացմանը: ՀՀ -ում նման երևույթից խուսափելու համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ տնտեսական և աշխատանքային պայմաններ, առաջին հերթին մեր երկրի տաղանդավոր և անհրաժեշտ մարդկանց համար: Խոսքը հատկապես տեխնիկական կամ տեղեկատվական մասնագիտություններ ստացած երիտասարդների համար է, հնարավոր աշխատանքի համար համադրելի և ընդունելի ֆինանսական պայմանների ստեղծման մասին է:

Համաճարակի ընթացքում խաթարվել են միջպետական հարաբերությունները, ինչը կարող է համարվել ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների արդյունաբերականացման և վերաարդյունաբերականացման նոր փուլի իրատեսական տարբերակ, որը միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում կբարձրացնի բարձր և ցածր որակավորում ունեցող աշխատուժի կարիքը և կհանգեցնի միգրացիոն հոսքերի խոչընդոտների որոշակի թուլացմանը:

Աշխատանքային միգրացիայի սկսվելուն պես բնակչության շատ ավելի աղքատ սոցիալական խմբեր դառնալու են «նոր» միգրանտներ: Վերջիններս կղժվարանան հարմարվել պայմաններին, ինչպես աշխատաշուկայում, այնպես էլ առօրյա կյանքում և սոցիալական գործարքների մեծ մասն կսկսեն իրականացվել ոչ ֆորմալ կապերի միջոցով: Այս ամենը մեծացնում է «միգրացիոն ռիսկերը» և միգրանտների խոցելիությունը: Մյուս կողմից, այդպիսի միգրանտները ունեն ոչ պատշաճ իրավագիտակցություն և նախընտրում են կամ ընդհանրապես չպաշտպանել իրենց իրավունքները, կամ այն անել նույն ոչ ֆորմալ (կամ պարզապես հանցավոր) գործակալների միջոցով:

ԵԱՏՄ շրջանակներում կարճաժամկետ հատվածում միգրացիոն հոսքերը չեն նվազի: Դրանք կփոխեն իրենց ձևաչափը. կլինեն ավելի շատ ստվերային հարաբերություններ, կպակասեն մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը և աշխատանքի պաշտպանության չափանիշները, ինչը, կնպաստի նաև աշխատուժ արտահանող երկրներում աղքատության աճին: Դրա արդյունքում կբարդանա միգրացիոն համակարգի կառավարման պետական մեխանիզմների աշխատանքը: Միգրանտների աշխատանքի պահանջարկը աստիճանաբար կաճի, և միջնաժամկետ հեռանկարում աշխատանքային միգրանտները, որոնք սահմանափակող միջոցառումների ավարտից անմիջապես հետո ստվերային աշխատանքի կանցնեն, ինչպես նաև նրանք, ովքեր ժամանակավորապես մեկնել են հայրենիք, ավելի շատ հնարավորություններ են ստանում օրինական աշխատանքի անցնել: Զգալի ուշադրություն է դարձվելու բարձր որակավորում ունեցող աշխատուժի ներհոսքին և ուղեղների արտահոսքի կրճատմանը:

Հաշվի առնելով մեր աշխատուժի հիմանական հոսքը ՌԴ է մեծանում է ՌԴ-ից կախվածության ռիսկը, միաժամանակ անհրաժեշտ է կարևորվել այդտեղ

միգրացիայի զարգացումը: Ներկայումս ՌԴ միգրանտների պահանջարկը հիմնականում պայմանավորված է տնտեսական պատճառներով: ՌԴ ամենամեծ մեզապոլիսներում, դինամիկ աճող տնտեսություն ունեցող տարածաշրջաններում, սահմանային տարածքներում, որտեղ աշխատանքային միգրացիան արագորեն զարգացել է, միգրանտներն արդեն զբաղեցրել են որոշակի տնտեսական խորշեր, որոնք հետագայում կխորանան և ընդլայնվեն: Նման շրջաններում օտարերկրյա աշխատողների աշխատուժն արդեն դարձել է տնտեսության կառուցվածքային գործոն, որը չի կարող արդյունավետ գործել առանց ներգաղթյալների ներգրավման:

Աշխատանքային միգրացիայի անարդյունավետ կարգավորումը որպես կանոն, իր հետ բերում է աշխատողների և ձեռնարկությունների սոցիալ-տնտեսական ծախսերի աճ: Այնուամենայնիվ, միգրացիայի կառավարումը կարող է ավելի արդյունավետ լինել միայն այն ժամանակ, երբ երկրներում աշխատաշուկայի ինստիտուտները և սոցիալական գործընկերները մեծացնեն իրենց մասնակցությունը միգրացիոն երկխոսությանը: Համագործակցության ընդլայնումը նպաստում է միգրացիոն ռեժիմների ձևավորմանը, որոնք նվազեցնում են այդ ծախսերը: Դրա հիմնական ուղղությունները ներառում են աշխատողների իրավունքների պաշտպանությունը, աշխատողների թվի և առկա աշխատատեղերի համապատասխանության բարելավումը, այդ թվում՝ որակավորման ստանդարտների և հմտությունների և որակավորումների ճանաչման համակարգերի մշակման և սոցիալական ապահովության համակարգերի համահունչության բարելավման միջոցով:

Վիճակագրական տվյալների բարելավումը հնարավորություն կտա փաստարկված հիմնավորումներով արդյունավետ աշխատանքի միգրացիայի քաղաքականության մշակումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2016-2019 [Ashxatanqi showkan Hayastani Hanrapetowt'yownowm, 2016-2019]
2. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու - 2020, [Hayastani jhoghovrdagrakan jhoghovac'ow - 2020]
3. Հայաստանի վիճակագրական տարեգրքերը 2017-2020 [Hayastani vitwakagrakan taregrqery' 2017-2020]
4. Биссон Л. Сотрудничество России и ЕС в сфере миграции // Мировая экономика и международные отношения. - 2014. - №4, - с. 72-81. [Bisson L. Sotrudnichestvo Rossii i ES v sfere migracii // Mirovaja jekonomika i mezhdunarodnye otnosheniya. - 2014. - №4, - s. 72-81.]
5. Готовцева Л. Г. Финансово-экономические характеристики и тенденции межгосударственной трудовой миграции / Л. Г. Готовцева, А. П. Рязанцев, Е. Ю. Хрусталева // Проблемы прогнозирования. - 2012. - № 4. - С. 80-85. [Gotovceva L. G. Finansovo-jekonomicheskie harakteristiki i tendencii mezhgosudarstvennoj trudovoj migracii / L. G. Gotovceva, A. P. Rjazancev, E. Ju. Hrustalev // Problemy

- прогнозированија. - 2012. - # 4. - S. 80-85.]
6. Макарян А.Р., Роль новой модели политикизанятости в снижении уровня безработицы в Республике Армения, Региональные проблемы преобразования экономики, РАН, Дагестанский научный центр Институт социально-экономических исследований, № 4 (42), 2014 с. 148-153. [Makarjan A.R., Rol' novoj modeli politikizanjatosti v snizhenii urovnja bezraboticy v Respublike Armenija, Regional'nye problemy preobrazovanija jekonomiki, RAN, Dagestanskij nauchnyj centr Institut social'no-jekonomicheskikh issledovanij, # 4 (42), 2014 s. 148-153.]
 7. Мартынов И. Актуальные проблемы трудовой миграции, И. Мартынов, Мир перемен, 2012, № 3, стр. 181-184 [Martynov I. Aktual'nye problemy trudovoj migracii, I. Martynov, Mir peremen, 2012, # 3, str. 181-184.]
 8. Bellak C., Leibrecht M., Liebensteiner M.(2014) Shortterm Labour Migration from the Republic of Armenia to the Russian Federation, The Journal of Development Studies, 50:3, 349-367, DOI: [10.1080/00220388.2013.858125](https://doi.org/10.1080/00220388.2013.858125)
 9. Hakobyan I. Remittances of Migrants; The Role of the Diaspora in Human Development in: National Human Development Report, Armenia. Yerevan: UNDP. 2009.
 10. IOM 2011 Assessment Labour Market Potential in Armenia, Yerevan, p. 14, Minasyan A, Poghosyan A, Gevorgyan L., Chobanyan H. 2008. Return Migration to Armenia in 2002-2008: A study. Yerevan: Asoghik.
 11. IOM 2014 Report on Household Survey on Migration in Armenia, Yerevan,
 12. Minasyan, Anna, Alina Poghosyan, Lilit Gevorgyan & Haykanush Chobanyan 2008. Return Migration to Armenia in 2002-2008: A study. Yerevan: Asoghik.
 13. Dulgaryan, Anush, George Welton, Aaron Erlich & Andrew Golda 2008. Labor migration in Armenian Communities: a Community Survey. Yerevan: Eurasia Partnership Foundation & Caucasus Research Resource Centers
 14. Minasyan A, Poghosyan A, Hakobyan T. , Hanchilova B. 2008, Labor Migration from Armenia in 2005-2007: A survey. Yerevan: Asoghik
 15. Denisenko M., Chernina E. 2017. The Migration of Labor and Migrant Incomes in Russia, Problems of Economic Transition, 59:11-12, 886-908, DOI: [10.1080/10611991.2017.1431482](https://doi.org/10.1080/10611991.2017.1431482)
 16. Sedlov A. 2019. The Imperatives of Labor Immigration to Russia, Sociological Research, 58:1-2, 20-39, DOI: [10.1080/10610154.2019.1688995](https://doi.org/10.1080/10610154.2019.1688995)
 17. <https://documents1.worldbank.org/curated/en/402321574328607652/pdf/Armenia-Better-Understanding-International-Labor-Mobility.pdf>

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՅԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԳՐԻԳՈՐ ԹԱԹՈՒԼԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

Համառոտագիր: Տնտեսության շուկայական վերափոխումը առաջացրել է աշխատունակ բնակչության արտագաղթի աննախադեպ ալիք: Մարդկանց միգրացիան այլ երկրներ դարձել է մեր դարաշրջանի ամենաբարդ և խիստ վիճահարույց խնդիրներից մեկը: Այն առաջին հերթին, երկրի տնտեսական և ժողովրդագրական զարգացման անհամամասնության դրսևորում է:

ՀՀ-ում 2020 թ.-ին ծավալվող տնտեսական անկումն ունի իր առանձնահատկությունները: Տնտեսական իրավիճակի կտրուկ վատթարացմանը հիմնականում պայմանավորված է համավարակով, Արցախյան երկրորդ պատերազմով, աշխատուժի արտահոսքի կարճատևամբ, բնակչության սոցիալական անհանգստությամբ, որը կուտակվել է և խորանում է վերջին տարիներին: Այս ամենը հնարավորություն է տալիս կանխատեսել անկայուն սոցիալ-տնտեսական իրավիճակ, որի պատճառով միգրացիոն գործընթացների կառավարման հրատապ հարցերի լուծումը կտեղափոխվի երկրորդ պլան, և ավելի նշանակալից կլինի աշխատանքային միգրանտների մեկնումը հայրենիքից:

Հետազոտության շրջանակում բնութագրվել է աշխատանքային միգրացիայի էությունն ու ընդհանուր օրինաչափությունները, բացահայտվել և վերլուծվել է աշխատանքային միգրացիայի ներկա միտումները, աշխատուժ արտահանող և ներմուծող երկրների համար իրականացվել է աշխատանքային միգրացիայի դրական և բացասական սոցիալ-տնտեսական հետևանքների գնահատում: ՀՀ միգրացիոն հիմնախնդիրները համապարփակ ուսումնասիրելու նպատակով վերլուծվել է ուղևորահոսքերի, միգրացիոն հոսքերի, դրանց կազմի և կառուցվածքի, Հայաստանի Հանրապետություն անձնական դրամական փոխանցումների, ժողովրդագրական իրավիճակը բնութագրող հիմնական և մի շարք ցուցանիշների դինամիկան 2017-2019 թթ.-ին: Աշխատանքում ներկայացվել է Հայաստանի Հանրապետության բնակչության թվաքանակի ավելացման հետ կապված հիմնական բացթողումները, կանխատեսվել է միջնաժամկետ հեռանկարում (3-4 տարի) սցենարները, որոնք ուղղակիորեն կախված են կարճաժամկետ կտրվածքով կառավարության կողմից ձեռնարկված սոցիալ-տնտեսական միջոցառումներից:

Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա մշակվել է ՀՀ համար աշխատանքային միգրացիայի բացասական հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումներ:

Գիտական նորույթը: ՀՀ աշխատանքի շուկայում լարված իրավիճակը մեղմելու նպատակով անհրաժեշտ են հակաճգնաժամային միջոցառումներ. ա) խրախուսել լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը, պահպանել և աջակցել տնտեսապես կենսունակ աշխատատեղերը, զարգացնել ժամանակավոր զբաղվածությունը, բ) նպաստել աշխատունակ տարիքի բնակչության միգրացիային՝ երկրից

դուրս աշխատելու համար՝ աշխատանքային միգրանտների պաշտպանության և աշխատանքային միգրացիայի ծախսերի նվազեցման հաշվին, գ) նպաստել շարունակական կրթության համակարգի կազմակերպմանը, դ) ընդլայնել երկարաժամկետ վերաֆինանսավորման մասշտաբը:

Աշխատանքային միգրացիայի սկսվելուն պես բնակչության շատ ավելի աղքատ սոցիալական խմբեր դառնալու են «նոր» միգրանտներ: Միգրացիայի կառավարման արդյունավետությունը պետք է բարձրացնել երկրների աշխատաշուկայի ինստիտուտների և սոցիալական գործընկերների համագործակցության ընդլայնման հաշվին, ինչը կնպաստի միգրացիոն ռեժիմների ձևավորմանը, որի արդյունքում նվազեցվում են ծախսերը: Վիճակագրական տվյալների բարելավումը հնարավորություն կտա փաստարկված հիմնավորումներով արդյունավետ աշխատանքի միգրացիայի քաղաքականության մշակումը:

Բանալի բառեր՝ աշխատանքային միգրացիա, աշխատանքային ռեսուրսներ, գլոբալիզացիա, փոքր և միջին բիզնես, աշխատաշուկա, ներգաղթ, միգրանտ, էմիգրանտ

ВОПРОСЫ РАБОЧЕЙ МИГРАЦИИ РА

ГРИГОР ТАТУЛОВИЧ МАНУКЯН

Кандидат экономических наук

Аннотация. Рыночная трансформация экономики вызвала беспрецедентную волну эмиграции трудоспособного населения. Миграция людей в другие страны стала одной из самых сложных и весьма спорных проблем нашей эпохи. Прежде всего, это отражает диспропорцию экономического и демографического развития страны.

Экономический спад в Армении в 2020 году имеет свои особенности. Резкое ухудшение экономической ситуации в основном связано с эпидемией, Второй Арцахской войной, сокращением оттока рабочей силы и социальными волнениями населения, которые накапливались и усиливались в последние годы. Все это дает возможность прогнозировать нестабильную социально-экономическую ситуацию, из-за которой решение актуальных вопросов в управлении миграционными процессами отодвинется на второй план, а отъезд трудовых мигрантов с родины будет более значительным.

В исследовании описана сущность и общие закономерности трудовой миграции, выявлены и проанализированы современные тенденции трудовой миграции, оценены положительные и отрицательные социально-экономические последствия трудовой миграции для стран-экспортеров и импортеров рабочей силы. В целях всестороннего изучения миграционных проблем Республики Армения была проведена динамика ряда ключевых показателей, характеризующих потоки, мигра-

ционные потоки, их структуру, личные денежные переводы в Республику Армения и демографическую ситуацию в 2017-2019 годах проанализированы. В статье представлены основные недостатки, связанные с увеличением населения Республики Армения, прогнозируются сценарии в среднесрочной перспективе (3-4 года), которые напрямую зависят от социально-экономических мер, принимаемых государством в краткосрочной перспективе.

На основании исследований и анализа были разработаны меры, направленные на снижение негативных последствий трудовой миграции для Республики Армения.

Научная новизна. Необходимы антикризисные меры для смягчения напряженной ситуации на рынке труда РА. а) поощрять создание дополнительных рабочих мест, поддерживать и поддерживать экономически изнеможенные рабочие места, развивать временную занятость, б) способствовать миграции населения трудоспособного возраста на работу за границу, защищая трудящихся-мигрантов, сокращая затраты на трудовую миграцию) масштаб долгосрочного рефинансирования.

Как только начнется трудовая миграция, «новыми» мигрантами станут гораздо более бедные социальные группы населения. Эффективность управления миграцией следует повысить за счет расширения сотрудничества институтов рынка труда и социальных партнеров, что будет способствовать установлению миграционных режимов, что снизит затраты. Улучшение статистики позволит разработать эффективную политику в области трудовой миграции с обоснованными обоснованиями.

Ключевые слова: трудовая миграция, глобализация, трудовые ресурсы, малый и средний бизнес, рынок труда, иммиграция, мигранты, эмигрант

RA LABOR MIGRATION ISSUES

GRIGOR TATUL MANUKYAN

Ph.D. in Economics

Abstract. The market transformation of the economy has caused an unprecedented wave of emigration of the able-bodied population. The migration of people to other countries has become one of the most difficult, highly controversial issues of our era. First of all, it reflects the disproportion of the economic and demographic development of the country.

The economic downturn in Armenia in 2020 has its peculiarities. The sharp deterioration of the economic situation is mainly due to the pandemic, the Second Artsakh War, the reduction of labor outflows, and the social unrest of the population, which has accumulated and deepened in recent years. All this makes it possible to predict an unstable socio-economic situation, due to which the solution of urgent issues

in the management of migration processes will be transferred to the background, and the departure of labor migrants from the homeland will be more significant.

Within the framework of the research, the essence and general patterns of labor migration were described, the current tendencies of labor migration were revealed, the assessment of positive-negative socio-economic consequences of labor migration was carried out for the countries exporting and importing labor. In order to comprehensively study the migration issues of the Republic of Armenia, the dynamics of a number of key indicators characterizing the passenger flows, migration flows, their structure, personal remittances to the Republic of Armenia, and the demographic situation in 2017-2019 were analyzed. The paper presents the main shortcomings related to the increase of the population of the Republic of Armenia, predicts scenarios in the medium term (3-4 years), which directly depend on the socio-economic measures taken by the government in the short term.

Based on the studies and analyzes, measures aimed at reducing the negative effects of labor migration for the Republic of Armenia have been developed.

Scientific Novelty. Anti-crisis measures are needed to alleviate the tense situation in the RA labor market. (a) to encourage the creation of additional employment, to maintain and to support economically viable employment, to develop temporary employment; (b) to promote the migration of the working age population to work abroad, by protecting migrant workers and by reducing labor migration costs, c) contribute to the organization of the continuing education system; d) expand the scale of long-term refinancing.

As soon as labor migration begins, poorer social groups of the population will become "new" migrants. The effectiveness of migration management should be increased by expanding the cooperation of the labor market institutions and social partners, which will contribute to the establishment of migration regimes, which will reduce costs. Improving the statistics will enable the development of an effective labor migration policy with substantiated justifications.

Keywords: labor migration, labor resources, globalization, small and medium business, labor market, immigration, migrants, emigrant